# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՆԵՐԱՌՅԱԼ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ և ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/106-2

ք. Երևան

«26» Հունվարի 2022թ.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որը գործում է «ՀՀ պետական եկամուտների կոմիտեն»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Աիդա Հակոբյանի, որը գործում է «ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3950000 (երեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով կնքվելիք վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Գյումրի, Հաղթանակի պող. 64
«Ինեկոբանկ» ՓԲԸ «Գյումրի» մասնաճյուղ
Հ/Հ 2050122041991001
ՀՎՀՀ՝ 05519933
Տնօրեն

**Է. Գևորգյան** ____________ /ստորագրություն/ Կ.Տ/

**Ա. Հակոբյան** ____________ /ստորագրություն/ Կ.Տ/

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

________________________

Հավելված N 1
« 26 » Հունվարի 2022թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/106-2 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

<table>
<tr><th colspan="8">Ծառայության</th></tr>
<tr><th>Չ/Հ</th><th>Անվանումը</th><th>Տեխնիկական բնութագիրը</th><th>Չ/մ</th><th>Քանակը</th><th>Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)</th><th>Մատուցման վայրը</th><th>Մատուցման ժամկետը</th></tr>
<tr><td>1</td><td>մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայություններ CPV 52111100/502</td><td>մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայության համար անհրաժեշտ սարքավորումներ այդ թվում՝<br><br>Տեսաձայնագրող սարք.
<table>
<tr><td>Ալիքների քանակ</td><td>16</td></tr>
<tr><td>ինտերֆեյս</td><td>Առնվազն 1xHDMI, 1xVGA<br>2xUSB , 1x RS485,</td></tr>
<tr><td>Ինտերֆեյսի կետայնություն</td><td>HDMI:3840x2160, 1920x1080, 1280x1024,1280x720<br>VGA:1920x1080, 1280x1024, 1280x720</td></tr>
<tr><td>Տեսագրման սեղմում</td><td>H.265/ H.264+/H. 264/MJPEG 5MP, 4MP, 3MP, 1080P, 1.3MP, 720P,D1 և այլն</td></tr>
<tr><td>Ցանցային ինտերֆեյս</td><td>1*RJ-45 1000MB</td></tr>
<tr><td>Աուդիո և տեսագրում</td><td>HDCVI-մուտք,AHD-մուտք,TVI-մուտք, CVBS-մուտք</td></tr>
<tr><td>Ցանցային ֆունկցիաներ</td><td>HTTP, HTTPS, TCP/IP, IPv4/IPv6, UPNP, SNMP, RTSP, UDP, SMTP, NTP, DHCP, DNS, IP filter, PPPoE, DDNS, FTP, ALARM SERVER, IP SEARCH, P2P<br>ONVIF ,</td></tr>
<tr><td>Հիշողության կարգավորումներ</td><td>Առնվազն 2 հատ SATA պորտ առնվազն 10 TB տարողությամբ յուրաքանչյուրը</td></tr>
<tr><td>Պահանջվող քանակ</td><td>1</td></tr>
</table>
<br>Կոշտ սկավառակ.</td><td>դրամ</td><td>1</td><td>950000</td><td>ՀՀ ք. Կապան, Ռ. Մինասյան 20ա</td><td>Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա համաձայնագրին ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում</td></tr>
</table>

| | |
|---|---|
| տարողություն | Առնվազն 6 TB |
| Քեշ հիշողություն | 256MB |
| Պտտման արագություն | 7200 RPM |
| Աշխատանքային ռեժիմ | surveillance HDD |
| Պահանջվող քանակ | 2 |

**Ներքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/2.7-3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիաի հեռավորություն(IR) | Առնվազն 30 մետր |
| Տեսագրման ելքեր | 1xBNC բարձր կետայնության / |
| Անվտանգության աստիճան | IP66-67 |
| Պահանջվող քանակ | 8 |

**Արտաքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիաի հեռավորություն(IR) | Առնվազն 70 մետր |
| Տեսագրման ելքեր | 1xBNC բարձր կետայնության |
| Անվտանգության աստիճան | IP67 |
| Պահանջվող քանակ | 6 |

**Տեսահսկման համակարգի տեղադրման և ստեղծման համար պահանջվող այլ պարագաներ՝**

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>
<table>
<tr><td>լարերի մոնտաժի համար նախատեսված տուփեր</td><td>100*100*60mm<br>14 հատ</td></tr>
<tr><td>CCTV տեսակի մալուխ</td><td>550 մետր 4+1 արտաքին մոնտաժման</td></tr>
<tr><td>Վարդակ և խրոցակ</td><td>3 տեղ</td></tr>
<tr><td>Մալուխատար ինքնակպչուն ժապավենով</td><td>25*40 չափի<br>40 մետր</td></tr>
<tr><td>Սնուցման սարք</td><td>Տեսախցիկների համար12Վ 30 Ա</td></tr>
<tr><td>Ցանցային պահարան</td><td>6U տեղանոց մետաղական Կոնստրուկցիայի տիպ-հավաքվող 1 դարակով</td></tr>
</table>
Կատարողը համակարգում առկա տեսախցիկները պետք է տեղադրի շինության արտաքին պատերին առավելագույնը 4 մետր բարձրության վրա :<br>
Կատարողի կողմից լարանցման համար կատարվելու են անցքեր պատերի միջով մինչև 60 սմ հաստությամբ և 50 մմ տրամագծով:<br>
Համակարգում առկա տեսաձայնագրող սարքը և տեսախցիկները պետք է աշխատեն գործարանային ծրագրային ապահովմամբ:<br>
Համակարգի համար սահմանվում է 365 օր երաշխիքային ժամկետ:
</td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
</tr>
<tr>
<td>2</td>
<td>մոնիթորինգային կենտրոնի սարքավորումներ ի, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայությունններ CPV 52111100/503</td>
<td>
մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայության համար անհրաժեշտ սարքավորումներ այդ թվում՝<br><br>
Տեսաձայնագրող սարք.
<table>
<tr><td>Ալիքների քանակ</td><td>8</td></tr>
<tr><td>Ինտերֆեյս</td><td>Առնվազն 1*HDMI, 1xVGA<br>2xUSB ,RS232, 1x RS485,</td></tr>
<tr><td>Ինտերֆեյսի կետայնություն</td><td>1920x1080, 1280x1024, 1280x720</td></tr>
<tr><td>Ցանցային ինտերֆեյս</td><td>1*RJ-45</td></tr>
<tr><td>Ցանցային ֆունկցիաներ</td><td>HTTP, HTTPS, TCP/IP, IPv4/IPv6, UPNP, SNMP, RTSP, UDP, SMTP, NTP, DHCP, DNS, IP filter, PPPoE, DDNS, FTP, ALARM SERVER, IP SEARCH,P2P<br>ONVIF ,</td></tr>
<tr><td>Աուդիո և տեսագրում</td><td>HDCVI-մուտք, AHD-մուտք, TVI-մուտք, CVBS-մուտք</td></tr>
<tr><td>Հիշողության կարգավորումներ</td><td>Առնվազն 1 հատ SATA պորտ առնվազն 10 TB տարողությամբ</td></tr>
<tr><td>Պահանջվող քանակ</td><td>1</td></tr>
</table>
Կոշտ սկավառակ.
</td>
<td>դրամ</td>
<td>1</td>
<td>500000</td>
<td>ՀՀ ք. Գորիս Տաթևացի 9</td>
<td>Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| տարողություն | Առնվազն 6 TB |
| Քեշ հիշողություն | 256MB |
| Պտտման արագություն | 7200 RPM |
| Աշխատանքային ռեժիմ | surveillance HDD |
| Պահանջվող քանակ | 1 |

**Ներքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/2.7-3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիայի հեռավորություն(IR) | Առնվազն 30 մետր |
| Տեսագրման ելքեր | 1xBNC բարձր կետայնության / |
| Անվտանգության աստիճան | IP66-67 |
| Պահանջվող քանակ | 4 |

**Արտաքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիայի հեռավորություն(IR) | Առնվազն 70 մետր |
| Տեսագրման ելքեր | 1xBNC բարձր կետայնության |
| Անվտանգության աստիճան | IP67 |
| Պահանջվող քանակ | 1 |

**Տեսահսկման համակարգի տեղադրման և ստեղծման համար պահանջվող այլ պարագաներ՝**

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>
<table>
<tr><td>լարերի մոնտաժի համար նախատեսված տուփեր</td><td>100*100*60mm<br>5 հատ</td></tr>
<tr><td>CCTV տեսակի մալուխ</td><td>250 մետր 4+1 դրսի</td></tr>
<tr><td>Վարդակ և խրոցակ</td><td>3 տեղ</td></tr>
<tr><td>Մալուխատար ինքնակպչուն ժապավեն</td><td>25*40 չափի<br>20 մետր</td></tr>
<tr><td>Սնուցման սարք</td><td>Տեսախցիկների համար12Վ 30 Ա</td></tr>
<tr><td>Ցանցային պահարան</td><td>6U տեղանոց մետաղական Կոնստրուկցիայի տիպ-հավաքվող 1 դարակով</td></tr>
</table>
Կատարողը համակարգում առկա տեսախցիկները պետք է տեղադրի շինության արտաքին պատերին առավելագույնը 4 մետր բարձրության վրա :<br>
Կատարողի կողմից լարանցման համար կատարվելու են անցքեր պատերի միջով մինչև 60 սմ հաստությամբ և 50 մմ տրամագծով:<br>
Համակարգում առկա տեսաձայնագրող սարքը և տեսախցիկները պետք է աշխատեն գործարանային ծրագրային ապահովմամբ:<br>
Համակարգի համար սահմանվում է 365 օր երաշխիքային ժամկետ:
</td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
</tr>
<tr>
<td>3</td>
<td>մոնիթորինգային կենտրոնի սարքավորումներ ի, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայություններ CPV 52111100/504</td>
<td>
մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայության համար անհրաժեշտ սարքավորումներ այդ թվում՝<br><br>
Տեսաձայնագրող սարք.
<table>
<tr><td>Ալիքների քանակ</td><td>16</td></tr>
<tr><td>ինտերֆեյս</td><td>Առնվազն 1xHDMI, 1xVGA<br>2xUSB , 1x RS485,</td></tr>
<tr><td>Ինտերֆեյսի կետայնություն</td><td>HDMI: 3840x2160, 1920x1080, 1280x1024,1280x720<br>VGA: 1920x1080, 1280x1024, 1280x720</td></tr>
<tr><td>Տեսագրման սեղմում</td><td>H.265/ H.264+/H. 264/MJPEG 5MP, 4MP, 3MP, 1080P, 1.3MP, 720P,D1 և այլն</td></tr>
<tr><td>Ցանցային ինտերֆեյս</td><td>1*RJ-45 1000MB</td></tr>
<tr><td>Աուդիո և տեսագրում</td><td>HDCVI-մուտք, AHD-մուտք, TVI-մուտք, CVBS-մուտք</td></tr>
<tr><td>Ցանցային ֆունկցիաներ</td><td>HTTP, HTTPS, TCP/IP, IPv4/IPv6, UPNP, SNMP, RTSP, UDP, SMTP, NTP, DHCP, DNS, IP filter, PPPoE, DDNS, FTP, ALARM SERVER, IP SEARCH, P2P<br>ONVIF ,</td></tr>
<tr><td>Հիշողության կարգավորումներ</td><td>Առնվազն 2 հատ SATA պորտ առնվազն 10 TB տարողությամբ յուրաքանչյուրը</td></tr>
</table>
</td>
<td>դրամ</td>
<td>1</td>
<td>700000</td>
<td>ՀՀ ք. Եղեգնաձոր Նարեկացի 8/3</td>
<td>Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| | |
| Պահանջվող քանակ | 1 |

**Կոշտ սկավառակ.**

| | |
|---|---|
| տարողություն | Առնվազն 6 TB |
| Քեշ հիշողություն | 256MB |
| Պտտման արագություն | 7200 RPM |
| Աշխատանքային ռեժիմ | surveillance HDD |
| Պահանջվող քանակ | 1 |

**Ներքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/2.7-3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիայի հեռավորություն(IR) | Առնվազն 30 մետր |
| Տեսագրման ելքեր | 1xBNC բարձր կետայնության / |
| Անվտանգության աստիճան | IP66-67 |
| Պահանջվող քանակ | 5 |

**Արտաքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիայի հեռավորություն(IR) | Առնվազն 70 մետր |
| Տեսագրման ելքեր | 1xBNC բարձր կետայնության |

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>
<table>
<tr><td>Անվտանգության աստիճան</td><td>IP67</td></tr>
<tr><td>Պահանջվող քանակ</td><td>4</td></tr>
</table>
Տեսահսկման համակարգի տեղադրման և ստեղծման համար պահանջվող այլ պարագաներ՝
<table>
<tr><td>լարերի մոնտաժի համար նախատեսված տուփեր</td><td>100*100*60mm<br>9 հատ</td></tr>
<tr><td>CCTV տեսակի մալուխ</td><td>390 մետր 4+1 դրսի</td></tr>
<tr><td>Վարդակ և խրոցակ</td><td>3 տեղ</td></tr>
<tr><td>Մալուխատար ինքնակպչուն ժապավենով</td><td>25*40 չափի<br>20 մետր</td></tr>
<tr><td>Սնուցման սարք</td><td>Տեսախցիկների համար12Վ 30 Ա</td></tr>
<tr><td>Ցանցային պահարան</td><td>6U տեղանոց մետաղական Կոնստրուկցիայի տիպ-հավաքվող 1 դարակով</td></tr>
</table>
Կատարողը տեղադրման համար պետք է տրամադրել նաև երկարացման լար 3 տեղ հողանցումով :<br>
Կատարողը համակարգում առկա տեսախցիկները պետք է տեղադրի շինության արտաքին պատերին առավելագույնը 4 մետր բարձրության վրա :<br>
Կատարողի կողմից լարանցման համար կատարվելու են անցքեր պատերի միջով մինչև 60 սմ հաստությամբ և 50 մմ տրամագծով:<br>
Համակարգում առկա տեսաձայնագրող սարքը և տեսախցիկները պետք է աշխատեն գործարանային ծրագրային ապահովմամբ:<br>
Համակարգի համար սահմանվում է 365 օր երաշխիքային ժամկետ:
</td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
</tr>
<tr>
<td>11</td>
<td>մոնիթորինգային կենտրոնի սարքավորումներ ի, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայություններ CPV 52111100/512</td>
<td>
մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայության համար անհրաժեշտ սարքավորումներ այդ թվում՝<br>
Տեսաձայնագրող սարք.
<table>
<tr><td>Ալիքների քանակ</td><td>8</td></tr>
<tr><td>Ինտերֆեյս</td><td>Առնվազն 1*HDMI, 1xVGA<br>2xUSB ,RS232, 1x RS485,</td></tr>
<tr><td>Ինտերֆեյսի կետայնություն</td><td>1920x1080, 1280x1024, 1280x720</td></tr>
<tr><td>Ցանցային ինտերֆեյս</td><td>1*RJ-45</td></tr>
<tr><td>Ցանցային ֆունկցիաներ</td><td>HTTP, HTTPS, TCP/IP, IPv4/IPv6, UPNP, SNMP, RTSP, UDP, SMTP, NTP, DHCP, DNS, IP filter, PPPoE, DDNS, FTP, ALARM SERVER, IP SEARCH,P2P<br>ONVIF ,</td></tr>
</table>
</td>
<td>դրամ</td>
<td>1</td>
<td>500000</td>
<td>ՀՀ ք. Գավառ Հերոս քաղաք Նովոռոսսիյսկի փող 4</td>
<td>Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| Աուդիո և տեսագրում | HDCVI-մուտք, AHD-մուտք, TVI-մուտք, CVBS-մուտք |
| Հիշողության կարգավորումներ | Առնվազն 1 հատ SATA պորտ առնվազն 10 TB տարողությամբ |
| Պահանջվող քանակ | 1 |

**Կոշտ սկավառակ.**

| | |
|---|---|
| տարողություն | Առնվազն 6 TB |
| Քեշ հիշողություն | 256MB |
| Պտտման արագություն | 7200 RPM |
| Աշխատանքային ռեժիմ | surveillance HDD |
| Պահանջվող քանակ | 1 |

**Ներքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/2.7-3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիաի հեռավորություն(IR) | Առնվազն 30 մետր |
| Տեսագրման ելքեր | 1xBNC բարձր կետայնության / |
| Անվտանգության աստիճան | IP66-67 |
| Պահանջվող քանակ | 4 |

**Արտաքին տեղադրման տեսախցիկ.**

| | |
|---|---|
| Տեսախցիկի կետայնություն | Առնվազն 2 MP |
| Պատկերի սենսոր | 1/3.6" progressive scan CMOS |
| կետայնություն | 1920(H) * 1080(V)<br><br>25/30fps@1080P, 25/30/50/60fps@720P |
| Իլումինացիաի հեռավորություն(IR) | Առնվազն 70 մետր |

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>
<table>
<tr><td>Տեսագրման ելքեր</td><td>1xBNC բարձր կետայնության</td></tr>
<tr><td>Անվտանգության աստիճան</td><td>IP67</td></tr>
<tr><td>Պահանջվող քանակ</td><td>2</td></tr>
</table>
Տեսահսկման համակարգի տեղադրման և ստեղծման համար պահանջվող այլ պարագաներ՝
<table>
<tr><td>լարերի մոնտաժի համար նախատեսված տուփեր</td><td>100*100*60mm<br>6 հատ</td></tr>
<tr><td>CCTV տեսակի մալուխ</td><td>250 մետր 4+1 դրսի</td></tr>
<tr><td>Վարդակ և խրոցակ</td><td>3 տեղ</td></tr>
<tr><td>Մալուխատար ինքնակպչուն ժապավենով</td><td>25*40 չափի<br>25 մետր</td></tr>
<tr><td>Սնուցման սարք</td><td>Տեսախցիկների համար12Վ 30 Ա</td></tr>
<tr><td>Ցանցային պահարան</td><td>6U տեղանոց մետաղական Կոնստրուկցիայի տիպ-հավաքվող 1 դարակով</td></tr>
</table>
Կատարողը տեղադրման համար պետք է տրամադրել նաև երկարացման լար 3 տեղ հողանցումով :<br>
Կատարողը համակարգում առկա տեսախցիկները պետք է տեղադրի շինության արտաքին պատերին առավելագույնը 4 մետր բարձրության վրա :<br>
Կատարողի կողմից լարանցման համար կատարվելու են անցքեր պատերի միջով մինչև 60 սմ հաստությամբ և 50 մմ տրամագծով:<br>
Համակարգում առկա տեսաձայնագրող սարքը և տեսախցիկները պետք է աշխատեն գործարանային ծրագրային ապահովմամբ:<br>
Համակարգի համար սահմանվում է 365 օր երաշխիքային ժամկետ:
</td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
</tr>
<tr>
<td>13</td>
<td>մոնիթորինգային կենտրոնի սարքավորումներ ի, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայություններ CPV 52111100/514</td>
<td>
մոնիթորինգային կենտրոնի սարքավորումների, ներառյալ տեսահսկման համակարգի ստեղծման և տեղադրման ծառայության համար անհրաժեշտ սարքավորո(մներ այդ թվում՝<br>
Արտաքին տեղադրման տեսախցիկ.
<table>
<tr><td>Տեսախցիկի կետայնություն</td><td>Առնվազն 4MP</td></tr>
<tr><td>Պատկերի սենսոր</td><td>1/3.6մմ progressive scan CMOS</td></tr>
<tr><td>կետայնություն</td><td>4MP (2560x1440) 20k/s, 25/30k/s 3MP(2304x1296),</td></tr>
<tr><td>Իլումինացիաի հեռավորություն(IR)</td><td>Առնվազն 50 մետր</td></tr>
<tr><td>Համացանցային հնարավորություններ</td><td>Ethernet RJ-45 (10/100Base-T)</td></tr>
</table>
</td>
<td>դրամ</td>
<td>1</td>
<td>1300000</td>
<td>Հարավային մաքսատուն-վարչության Մեղրի մաքսային կետ բաժին</td>
<td>Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| Ցանցային պրոտոկոլներ | HTTP; HTTPS; TCP; ARP; RTSP; RTP; RTCP; UDP; SMTP; FTP; DHCP; DNS; DDNS; PPPoE; IPV4/V6; QoS; UPnP; NTP;Bonjour; IEEE, 802.1X; Multicast; ICMP; IGMP; TLS; SSH, ONVIF Profile S&G, API |
| Անվտանգության աստիճան | IP67 |
| Պահանջվող քանակ | 6 |

**Ցանցային բաժանարար.**

| | |
|---|---|
| Ցանցային ինտերֆեյս | 1*1000 Base-X 1*10/100/1000 Base-T 8*10/100 Base-T (PoE սնուցում), |
| POE սնուցման սպառում | Port1-2≤60W, Port3-8≤30W, Total≤96W, |
| POE պրոտոկոլ | IEEE802.3af (PoE), IEEE802.3at (PoE+), Hi-PoE, |
| Պահանջվող քանակ | 1 |

**Ցանցային բաժանարար.**

| | |
|---|---|
| Ցանցային ինտերֆեյս | 1*1000 Base-X 1*10/100/1000 Base-T 4*10/100 Base-T (PoE սնուցում), |
| POE սնուցման սպառում | Port1-2≤60W, Port3-8≤30W, Total≤96W, |
| POE պրոտոկոլ | IEEE802.3af(PoE), IEEE802.3at(PoE+),Hi-PoE, |
| Պահանջվող քանակ | 2 |

**Տեսահսկման համակարգի տեղադրման և ստեղծման համար պահանջվող այլ պարագաներ՝**

| | |
|---|---|
| FTP տեսակի CAT 6 24awg մալուխ | 300 մետր |
| RJ-45 տիպի կոնեկտորներ | 50 հատ |
| Հոսանքի մալուխ | 3*2,5mm 400 մետր |
| Օպտիկական մալուխ | Արտաքին անցկացման ճգապարանով առնվազն 4 մանրաթել Single Mode տեսակի 400 մետր |

Կատարողը համակարգում առկա տեսախցիկները պետք է տեղադրի շինության արտաքին պատերին առավելագույնը 4 մետր բարձրության վրա :

Կատարողի կողմից լարանցման համար կատարվելու են անցքեր պատերի միջով մինչև 60 սմ հաստությամբ և 50 մմ տրամագծով:

Համակարգում առկա տեսախցիկները պետք է աշխատեն գործարանային ծրագրային ապահովմամբ:

Տրամադրվող սարքավորումների համար սահմանվում է 365 օր երաշխիքային ժամկետ:

- **Տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված:**
- **Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, միացումը և վերջնական կարգաբերումը իրականացվելու է կատարողի կողմից, իր հաշվին և իր միջոցներով:**

- Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պատվիրատուն պայմանագրով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրության և ծառայությունը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրով սահմանված կարգով ընդունում է պայմանագրի արդյունքը:
- Այն դեպքում, երբ երաշխիքային ժամկետում ի հայտ են գալիս թերություններ և/կամ խնդիրներ, մատակարարը պարտավոր է պատվիրատուի կողմից դրա վերաբերյալ ծանուցվելուց 4 օրվա ընթացքում շտկել բոլոր խնդիրները:
- Պայմանագրի կնքվելուց և համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո մատուցողը պատվիրատուի պահանջով և վերջինիս համապատասխան ստորաբաժանման հետ համաձայնեցնելով կազմում և ներկայացնում է աշխատանքային գծագիր (1 թղթային և 1CD տարբերակով) ներառյալ սարք-սարքավորումների տեղադիրքերի, մալուխների անցկացման ուղիների և այլ միջոցների տեղադիրքերը:
- Տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին օգտագործումը պարունակում է նաև «կամ համարժեք» բառերը:
- Ընթացակարգն իրականացվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համապատասխան:
- 13-րդ չափաբաժնում նշված տեղադրվելիք տեսահսկման սարքավորումները պետք է համատեղելի լինեն ՀՀ ՊԵԿ-ում առկա SMART PSS համակարգին , քանի որ հանդիսանում է համալրում գործող համակարգին:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան ____________
/ստորագրություն/ Կ.Տ/

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԲԻԶՆԵՍ ԷԼԻՏԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Գյումրի, Հաղթանակի պող. 64
«Ինեկոբանկ» ՓԲԸ «Գյումրի» մասնաճյուղ
Հ/Հ 2050122041991001
ՀՎՀՀ՝ 05519933
Տնօրեն

Ա. Հակոբյան ____________
/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված 2
« 26 » Հունվարի 2022թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/106-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________
հհ___________________________
հվհհ_________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 2.1*
*« 26 » Հունվարի 2022թ. կնքված*
*ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/106-2 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________________
ազգանուն, անուն

____________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________________
ազգանուն, անուն

____________________________
ստորագրություն